ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 80-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետությանօրենքի 34-րդ,42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.N 912-Ն որոշման 34-րդ,35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 09.08.2021թ <<Թումանյան քաղաքի 5-րդ փողոցի թիվ 9 շենքի հարևանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքի սեփականություն համարելու,օրինականացնելու և փոստային հասցե տրամադրելու մասին>> թիվ 72-Ա որոշումը,անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N16082021-06-0049 վկայականը և հաշվի առնելով,որ քաղաքացի Արփի Արշալույսի Խաչատրյանն ընդունել է ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության գրավոր /մուտք՝ 01.09.2021թ. թիվ 398/ առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

որոշում եմ.

1.Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Թումանյան քաղաք,5-րդ փողոց, թիվ 9/28 (վկայական՝ N N16082021-06-0049) հասցեում գտնվող 27,0քմ արտաքին մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 21.5քմ/ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 0,0027 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած քաղաքացի Արփեն Արշալույսի Խաչատրյանին /ծնված 02.01.1978թ./:

2.Ավտոտնակը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը,այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ

հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Նշված կառույցն իրականացրած անձը գնման նախապատվության առաջարկն ընունելուց հետո 30-օրյա ժամկետում պարտավորվում է Թումանյանի համայնքապետարանի բյուջե վճարել 12042 (տասներկու հազար քառասուներկու) ՀՀ դրամ, որից՝ համայնքապետարանի 900265123274 հաշվեհամարին՝ 2592(երկու հազար հինգհարյուր իննսուներկու) ՀՀ դրամը որպես հողամասի օտարման գին, իսկ 9002 65123407 հաշվեհամարին՝ 9450 (ինը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ կառույցի օտարման գին /Տարածագնահատման գոտիականության 16-րդ գոտի/:

Վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

4.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները՝ ընդհանուր 12042 (տասներկու հազար քառասուներկու) ՀՀ դրամ 30 օրյա ժամկետում չվճարման դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում կրկին ներկայացնել գրավոր առաջարկություն անշարժ գույքը վարձակալելու վերաբերյալ:

Վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն տնօրինել 18.05.2006թ. թիվ 912-Նորոշման IV բաժնի 37-րդ կետով սահմանած կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 1
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 81-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>>N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Լեռնիկ Սանասարի Հակոբյանի դիմումը,սեփականության իրավունքի N 31082021-06-0040 վկայականը՝ տրված 25.04.2003թ. և մասնագետի առաջարկությունը՝
Որոշում եմ.

1.Մարուս Փաշոյի Հակոբյանին և Լեռնիկ Սանասարի Հակոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզի,Թումանյան համայնքի,Մարց գյուղի (ծածկագիր՝06-071-0003-0003-001) բնակելի տանը՝ մակերեսի չափը՝ 62,8 քմ և բնակելի կառուցապատման հողամասին՝ մակերեսի չափը՝0,143 հա տրամադրել նոր փոստային (ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք,գ.Մարց,2-րդ փողոց, 1-ին փակուղի,տուն N 1) հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՏԻԳՐԱՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

2021թ. սեպտեմբերի 1
ք.Թումանյան